


# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԿՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՐԵՆԴ

### ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՄԵՐՅԱՆ

Երկրի տնտեսության զարգացման մոդելների և սցենարների երկարամյա փնտրտուքից հետո վերջապես հասունանում է այն գիտակցությունը, որ առանց տեղական արդյունաբերության կայացման պետությունը մշտապես ստիպված է լինելու դիմագրավել առանձին երկրներից շարունակական կախվածության իրական սպառնալիքը: Միաժամանակ, տեղական արդյունաբերության զարգացումը չի կարող տեղի ունենալ տարբերայնորեն: Այն խորը և բազմակողմանի ուսումնասիրությունների կարիք ունի: Մեր համոզմամբ, նպատակահարմար է վեր հանել ապրանքների և ծառայությունների այն համախումբը, որոնց արտադրության գծով երկիրը կարող է հավակնել հարաբերական կամ բացարձակ առավելությունների: Սա, իր հերթին, պահանջում է մրցակցային առավելությունների գնահատման և բացահայտման համար հստակ չափորոշիչների մշակում: Առանց այդ չափորոշիչների, մրցակցային առավելությունների ներկայացումը կարող է սուբյեկտիվ կամ խիստ մոտավոր լինել: Այլ խոսքով՝ խնդիրը գիտականորեն հիմնավորված չափորոշիչների և դրանց օգնությամբ ուրվագծվող արդյունաբերական քաղաքականության մասին է, որը պետք է տարեցտարի կատարելագործվի՝ հաշվի առնելով ինչպես ներքին շուկայի, այնպես էլ գլոբալ տնտեսական զարգացումներն ու միտումները:

Գծապատկեր 1



<sup>1</sup> Տե՛ս <https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/33459>

Կասկածից վեր է, որ Հայաստանի արդյունաբերության զարգացումն ունի որոշակի հիմքեր և ավանդույթներ, հետևաբար հիմնական, ավանդական մասնագիտացման ճյուղերը պետք է վերլուծել խորհրդային շրջանից մինչև անկախության ձեռքբերումը:


Գծապատկեր 1-ի տվյալներից երևում է, որ 1989 թ. ի վեր արդյունաբերական արտադրությունը լուրջ անկում է արձանագրել: Դրա պատճառները տարբեր են, սակայն կարևոր է վերլուծել այն առանձին տնտեսակարգերը և կառավարման համակարգերը, որոնց օրոք գրանցվել են արդյունաբերական արտադրանքի զանազան ցուցանիշներ: Բացի այդ, անհրաժեշտ է նաև կատարել Հայաստանի Հանրապետության արդյունաբերության արտադրական կարողության ներկա վիճակի վերլուծություն և հաշվառում: Ի թիվս այլ միջոցառումների՝ նպատակահարմար ենք գտնում իրականացնել նաև հետևյալ քայլերը.

- վերլուծել ՀՀ արդյունաբերական ձեռնարկությունների և սպասարկող ենթակառուցվածքի կարիքները;
- գնահատել սեփականաշնորհման գործընթացի, աշխատուժի զբաղվածության հիմնական տեղաշարժերի ազդեցությունը ՀՀ արդյունաբերության ներկայիս վիճակի վրա;
- բացահայտել արդյունաբերության բնականոն գործունեության ներկայիս գլխավոր միտումներն ու զարգացման հնարավոր ուղղությունները;
- հստակեցնել արդյունաբերության զարգացման գլխավոր առաջնահերթություններն ու դրանց ընտրության չափանիշները;
- հիմնավորել արդյունաբերության առկա և հեռանկարային առավել զբաղիչ ներդրումային ճյուղերը;
- վերլուծել ՀՀ արդյունաբերության արտահանման կարողությունը ներկայացնող ճյուղերի, ձեռնարկությունների արդի և հեռանկարային զարգացման միտումները;
- ուսումնասիրել արդյունաբերության հիմնական ճյուղերը սպասարկող ենթակառուցվածքի զարգացման հեռանկարները՝ գիտություն, հաղորդակցությունների համակարգ, բանկային համակարգ, օժանդակ ծառայություններ;
- մշակել արդյունաբերական ձեռնարկությունների ներքին կոուպերացիայի ծավալման հիմնադրությունները և կատարել վերլուծական առաջարկություններ;
- գնահատել հարկային քաղաքականության ազդեցությունը ՀՀ արդյունաբերության զարգացման վրա և բացահայտել հարկային համակարգի համապատասխանության աստիճանը արդյունաբերական կարողության հետագա զարգացմանը;
- վերլուծել տեղական արդյունաբերության արտադրանքի իրացման համար առավել նպաստավոր արտաքին շուկաները;
- վեր հանել արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամի-

կայի, մասնավորապես անկման պատճառները:

**Գծապատկեր 2**

Հայաստանի հանքարդյունաբերության և վերամշակող արդյունաբերության վիճակը 2018 թ.<sup>2</sup>:



Ակնհայտ է, որ հիշյալ քայլերով չի կարելի սահմանափակվել: Մասնավորապես, հետագա քայլերում կարելի է բացահայտել փոքր ձեռնարկությունների զարգացման նախադրյալները Հայաստանում և համագործակցության հեռանկարները ԵՄ և ԵԱՏՄ շրջանակներում, համատեղ և խառը սեփականությամբ գործող ձեռնարկությունների զարգացման նախադրյալները, պետական մասնաբաժնով ձեռնարկությունների վերագործարկման հեռանկարները, ինչպես նաև արդյունաբերության զարգացման սոցիալական հիմնահարցերը:

Ընդամին, ժամանակակից աշխարհում մրցունակության բավարար մակարդակ ձեռք բերելու և այն պահպանելու համար կենսականորեն կարևոր են արտերկրի ուսանելի փորձի վերլուծությունն ու դրա տեղայնացման հնարավորությունների ուսումնասիրությունը: Այս առումով օգտակար է հատկապես Իսրայելի կառավարության արդյունաբերական քաղաքականության ուսումնասիրությունը<sup>3</sup>: Արդյունաբերության զարգացման հիմնական խնդիրը քաղաքացիների կենսամակարդակի բարելավումն է և հանրության անվտանգության ապահովումը. այդ նպատակով գիտության և տեխնոլոգիաների զարգացման համար պետական բյուջեից տարեցտարի ավելացվում են գիտությանը հատկացվող միջոցները, բարելավվում արդյունաբերության զարգացմանը միտված տնտեսական և տեխնիկական պայմանները: Այսպես օ-

<sup>2</sup> Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով՝ [www.parliament.am](http://www.parliament.am)

<sup>3</sup> See Innovation-Based Industrial Policy in Emerging Economies? The Case of Israel's IT Industry, <https://www.cambridge.org/core/journals/business-and-politics/article/innovation-based-industrial-policy-in-emerging-economies-the-case-of-israels-it-industry/229F539D06E13DCCBFC468AA47DD6D46>

րինակ՝ Իսրայելում գործում է տարբեր ոլորտների գլխավոր գիտնականների խումբ՝ բաղկացած գյուղատնտեսության, կապի, կրթության, շրջակա միջավայրի, առողջապահության, փախստականների ինտեգրման, արդյունաբերության և առևտրի, ազգային ենթակառուցվածքների, հանրային անվտանգության, գիտության և տեխնոլոգիաների 13 նախարարությունների անվանի գիտնականներից: Ամեն նախարարություն հստակեցրել է ոլորտի առաջնահերթությունները, ինչն էլ հենց համարվում է գիտության և տեխնոլոգիաների ազգային քաղաքականության առանցքը, իսկ գիտական խումբը գլխավորում է գիտության և տեխնոլոգիաների նախարարը: Ներկայումս այդ նախարարության (MOST) գլխավոր խնդիրները հետևյալն են.

- տնտեսական կիրառելիության հետ համահունչ գիտահետազոտական, փորձարարական, նորարական աշխատանքներին (ԳՀՓՆԱ) աջակցության մեծացում;

- հետազոտությունների առանձին ճյուղերում ազգային ենթակառուցվածքների ստեղծում, որոնք կհամարվեն ազգային գերակայություններ;

- գիտահետազոտական ինստիտուտներին և տարածքային գիտահետազոտական կենտրոնների աշխատանքներին աջակցություն<sup>4</sup>:

Իսրայելում գիտության և տեխնոլոգիաների նախարարությունն ամեն կերպ աջակցում է ազգային գիտական ծրագրի իրականացմանը, խրախուսում նոր տեխնոլոգիաների զարգացումը և գործնականում իրականացնում գիտության կարևորագույն ծրագրերի ֆինանսավորումը, անցկացնում է գիտության և տեխնոլոգիաների ոլորտի մրցույթներ՝ նախապես որոշակի չափորոշիչներով ընտրելով առաջնահերթները:

Այս նախարարությունը գլխավորապես զբաղված է հետևյալ կարևոր խնդիրների լուծմամբ.

- Իսրայելի ԳՀՓՆԱ ազգային քաղաքականության և առաջնահերթությունների հստակեցում;

- երկրի գիտատեխնիկական ենթակառուցվածքների զարգացում;

- գիտության ասպարեզում միջազգային համագործակցության ծավալում և ընդլայնում;

- գիտական և հետազոտական նոր կառույցների կայացմանը, ներառյալ՝ գիտական և վերլուծական մարզային կենտրոնների ստեղծմանն օժանդակություն;

- աջակցություն մտավոր կարողության և մարդկային կապիտալի զարգացմանը;

- գիտության տարբեր բնագավառներում քաղաքացիական հանրության, մասնավորապես երիտասարդ մասնագետների ինտեգրմանը նյութական և մասնագիտական օժանդակություն;

---

<sup>4</sup> Տե՛ս «The Ministry of Science and Technology, Chief Scientist», [https://www.gov.il/en/departments/units/most\\_chief\\_scientist](https://www.gov.il/en/departments/units/most_chief_scientist)

–թվայնացման, թվային տեխնոլոգիաների, դրանց ենթակառուցվածքների կայացմանն ու զարգացմանը աջակցություն;

–գիտության և տեխնոլոգիաների բնագավառում պետական մարմիններին մասնագիտական խորհրդատվություն<sup>5</sup>:

Մի քանի տարի առաջ գիտության և տեխնոլոգիաների նախարարի պարտականությունները դրված էին երկրի վարչապետի վրա: Նախարարության գործունեությունը ներառում է բնագիտական, հիմնարար և կիրառական հետազոտությունների տարբեր ուղղություններ և իր գործառույթներով կամուրջ է մի կողմից անվանի հետազոտողների, գիտնականների և նրանց ստեղծած արդյունքների, իսկ մյուս կողմից՝ արդյունաբերության տարբեր ճյուղերի, ինչպես նաև ռազմարդյունաբերական համակարգի միջև: Հասկանալի է, որ կառավարության այս օղակն ամեն կերպ բացահայտում է գիտության ներուժը և այն ծառայեցնում հանրության շահերին՝ առանձնահատուկ քայլեր ձեռնարկելով փորձագետների և գիտահետազոտական ինստիտուտների ստեղծած գիտական արդյունքների համակարգման ուղղությամբ: Պետությունը հայթայթում է անհրաժեշտ միջոցներ պահանջարկ ունեցող հետազոտությունների ֆինանսավորման համար, մասնավորապես այն դեպքերում, երբ դրանք ունեն կիրառական հստակ ուղղվածություն:

Ինչ վերաբերում է գիտատեխնիկական ոլորտում միջազգային համագործակցության ծավալմանը, ապա այն գլխավորապես հիմնվում է Իսրայելի համալսարանների շուրջ ձևավորված գիտագործնական ուղղվածության կլաստերների վրա, որոնց առանցքում հրեա գիտնականների ձևավորած համաշխարհային ցանցն է՝ հեղինակավոր համալսարանների գործընկերների մասնակցությամբ: Դրան մեծապես նպաստում են պետության վարած քաղաքականությունը և պետական մակարդակով իրականացվող մարքեթինգը գիտության և տեխնոլոգիաների բնագավառում: Արդյունքում տարբեր երկրների հետ կնքած հարյուրավոր միջազգային պայմանագրերը հնարավորություն են ընձեռել Իսրայելի գիտական կառույցներին համագործակցելու աշխարհի անվանի գիտնականների հետ, կիրառելու արդիական գիտական տեխնոլոգիաներ և օգտագործելու միջազգային բազմաթիվ դրամաշնորհներ:

Կարևոր է նկատել, որ Իսրայելում կենտրոնական կառավարությունը երկրի տարածքային մարմինների հետ ստեղծել է տասնյակից ավելի տարածքային գիտական կենտրոններ, որոնք կապում են երկրի բոլոր համայնքները՝ գիտական և հետազոտական ռեսուրսների առավել ամբողջական և արդյունավետ իրացման նպատակով, և նպաստում են հատկապես հեռավոր համայնքներում գիտական գործու-

---

<sup>5</sup> Տե՛ս «The Israeli Ministry of Science Technology and Space», <https://www.devex.com/organizations/israeli-ministry-of-science-technology-and-space-most-110041>

նեության ծավալմանն ու համագործակցությանը:

Ներկայումս այս ոլորտում գործում են նաև հանրային հատուկ հանձնաժողովներ, որոնք կանոնակարգում են գիտական կառույցների աշխատանքները և նյութական ռեսուրսներ հայթայթում դրանց զարգացման համար: Այս իմաստով կարևորվում են նաև նախարարության կողմից պարբերաբար կազմակերպվող գիտաժողովները, կլոր սեղանները և սեմինարները՝ մասնակցությամբ ակնառու գիտնականների, փորձագետների, հասարակական կազմակերպությունների և գործարար ոլորտի ներկայացուցիչների: Պետությունը հարթակ է տրամադրում կառույցների միջև համագործակցության համար և ամեն ամիս հրատարակում է երկրի գիտական ծրագրերին վերաբերող հաշվետվություններ: Բացի այդ, ակտիվացել են «գիտելիքների կենտրոնները», «գերազանցության կենտրոնները», որոնք զբաղվում են տեսական հետազոտություններով, ուսումնական և այլ ծրագրերով:

Երկրի գիտության և տեխնոլոգիաների զարգացման գործում անգնահատելի է 1993 թ. մեկնարկած «Yozma» ծրագիրը, որն ապահովում է վենչուրային ինդուստրիայի զարգացումն ու բարձր տեխնոլոգիաների սրընթաց վերելքը՝ ամբողջովին կայացնելով ոլորտը 1997 թ.<sup>6</sup>: Հատկանշական է, որ դրա օգնությամբ ձևավորված պետական վենչուրային ինվեստիցիոն ընկերությունը դարձավ «Ֆոնդերի ֆոնդ» 100 մլն դոլար հիմնադիր կապիտալով, ինչը ներդրվեց 10 մասնավոր նոր ներդրումային ծրագրերում: Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր ծրագրով պետության բաժնետոմսերի փաթեթը կազմում էր մինչև 40 %, ինչը նշանակում է, որ ֆոնդերի նկատմամբ վերահսկողությունը մասնավոր հատվածն է իրականացնում: Իսրայելի պետության ներդրած 100 մլն դոլարի շնորհիվ ներգրավվեցին մոտ 150 մլն դոլարի հասնող մասնավոր վենչուրային ներդրումներ, ինչը թույլ տվեց զարգացնել բարձր տեխնոլոգիաները և դրանց համար ապահովել վենչուրային կապիտալի բավարար քանակություն: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ այդ հիմնադրամների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կառավարությունը ներգրավեց արտերկրի ֆինանսական և ներդրումային հեղինակավոր, առաջնակարգ և փորձառու ընկերությունների՝ հիմնադրամների գործունեության կառավարումն ու վերահսկողությունը թողնելով տեղական մասնավոր կառույցներին և կառավարությանը: Նման պայմաններում հնարավոր դարձավ միջազգային ուսանելի փորձի արդյունավետ տեղայնացումն Իսրայելում «Yozma» հիմնադրամների միջոցով, ինչը նպաստեց երկրում վենչուրային կառավարման մշակույթի արմատավորմանը: Ներկայումս Իսրայելում գործում են հարյուրավոր վենչուրային ընկերություններ՝ մի քանի տասնյակ միլիարդ ԱՄՆ դոլարի հասնող

<sup>6</sup> Տե՛ս «Success stories: a brief view of Yozma's enduring capacity for successful enterprise», <http://www.yozma.com/success/Default.asp>

շրջանառությամբ, ինչը հանգեցրել է երկրի ՀՆԱ-ում և արտահանման ծավալներում բարձր տեխնոլոգիաների տեսակարար կշռի շոշափելի աճի:

Հաշվի առնելով մեզանում առկա գիտական ներուժը և բարձր տեխնոլոգիաների զարգացման նկատմամբ կառավարության ուշադրությունը՝ կարելի է եզրակացնել, որ Իսրայելի փորձը կիրառելի է Հայաստանի Հանրապետությունում: Գիտության և տեխնոլոգիաների զարգացումը կարող է և պետք է իր առանցքային դերակատարությունն ունենա Հայաստանի արդյունաբերական քաղաքականության մշակման և դրա իրականացման գործում: Այն միաժամանակ պահանջում է նոր և ավելի համակարգված մոտեցում որդեգրել գիտության և տեխնոլոգիաների բնագավառում կառավարման համակարգի վերակառուցման հանդեպ: Ներկայումս սովյալ ոլորտում ձևավորված պայմանները բնավ չեն նպաստում տնտեսության մրցունակության բարձրացմանը և գիտական ներուժի արդյունավետ իրացմանը: Ստորև ներկայացվում են Հայաստանի մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների:

**Գծապատկեր 3**

**Արդյունաբերության ծավալները տնտեսության տարբեր ոլորտներում**

Կառուցվածքը՝ %-ով



Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների

Մեր համոզմամբ, պետության և մասնավոր հատվածի, ինչպես նաև քաղաքացիական հանրության փորձագիտական հատվածի համագործակցությամբ հնարավոր է ձևավորել ոչ միայն վենչուրային հիմնադրամներ, այլև խառը ներդրումային ֆոնդեր, որոնց կարող են մասնակցել նաև Սփյուռքի բազմաթիվ մասնագիտացված կառույցներ<sup>7</sup>: Ավելին, Հայաստանի գիտատար արտադրությունների զարգացման

<sup>7</sup> Մասնավորապես հաջողված օրինակներից են Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունը, Կանադայի հայկական գործարար խորհուրդը և այլ կառույցներ:

շնորհիվ հնարավոր է ձևավորել նաև երկրի տնտեսական բրենդը, ինչը վճռական նշանակություն կունենա մրցակցային առավելությունների բացահայտման և արտաքին շուկաներում դրա արդյունավետ իրացման հարցում: Վերջինս ենթադրում է երկրի ճանաչելիության ապահովում աշխարհում՝ որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրության ոլորտում: Որպես կանոն՝ երկրի արդյունաբերական բրենդի ձևավորման խնդիրը պետք է պահանջարկված լինի կառավարության կողմից, որը պետք է հստակեցնի նաև այդ նպատակով տարվող գործունեության ուղղությունները: Աշխատանքներում կարող են ընդգրկվել տարբեր ոլորտներ՝ սկսած տեղեկատվական տեխնոլոգիաներից, նաև տեխնոլոգիաներից, կենսատեխնոլոգիաներից և վերջապահ՝ արդյունաբերության տարբեր ճյուղերի համար պատշաճ ենթակառուցվածքների ստեղծումը, ֆինանսական գործիքների, համապատասխան ինստիտուտների ձևավորումը, տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման արդյունավետ մեխանիզմների մշակումը և այլն: Այս հարցում էական օժանդակություն կարող են ցուցաբերել նաև երկրի բրենդի ձևավորման հարցերով մասնագիտացված հեղինակավոր կառույցները<sup>8</sup>: Հայաստանում գործող կառույցներից հիշյալ գործին կարող են իրենց մասնակցությունն ունենալ արտահանման խթանման և փոքր ձեռներեցությանն օժանդակող պետական և մասնավոր կառույցներն ու միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակները: Առաջին քայլերից մեկը կարող է լինել, օրինակ, երկրի մրցակցային առավելությունների և ներդրումային գրավչության մասին պատմող տեսահոլովակների ստեղծումը, որոնք պետք է պարունակեն առավել համոզիչ և ազդեցիկ փաստարկներ, որոնց ընտրության և ներկայացման ձևի մեջ պետք է ապահովել դրանք պատրաստողների արհեստավարությունը: Հայաստանի մասին պատմող նման տեսահոլովակները կարևոր է ներկայացնել BBC, CNN և այլ ընկերությունների միջոցով:

Երկրի տնտեսական բրենդի ձևավորման գործում կարևոր դեր ունեն նաև արդյունաբերության մրցունակ ոլորտներում համապատասխան կլաստերների ձևավորումն ու զարգացումը: Դինամիկ զարգացող համաշխարհային տնտեսության մեջ ընկերությունների չափը և շուկայի կառուցվածքը այն հիմնական գործոններն են, որոնք կարող են որոշիչ նշանակություն ունենալ երկրի տնտեսական մրցունակության և արդյունավետության ցուցանիշների համար: Գաղտնիք չէ, որ երկրի մրցունակության ապահովման առավել արդյունավետ ճանապարհը ընկերությունների շարունակական աճի ապահովումն է՝ դրանց չափը մեծացնելու և տարածելու շնորհիվ<sup>9</sup>, ինչը ենթադրում է, որ ընկերութ-

<sup>8</sup> Տե՛ս «Top 100 brand consultants, May 2019, The Manifest», <https://themanifest.com/branding/agencies>

<sup>9</sup> Տե՛ս «Economics of scale and scope», [http://saylordotorg.github.io/text\\_introduction-to-economic-analysis/s11-02-economies-of-scale-and-scope.html](http://saylordotorg.github.io/text_introduction-to-economic-analysis/s11-02-economies-of-scale-and-scope.html)



յունների ենթակառուցվածքների, մարդկային ռեսուրսների, տեխնոլոգիաների որակը և նորարարականությունը ուղղակիորեն կապված են ընկերությունների մեծության և շուկայի հնարավոր մրցակցային կառուցվածքի հետ: Նման մոտեցման պարագայում երկրի մրցունակության ապահովման համար անհրաժեշտ է այնպիսի կարևոր նախապայմաններ, ինչպիսիք են արտաքին առևտրի զարգացումը և վերազգային կորպորացիաների միջոցով օտարերկրյա ուղիղ ներդրումների ներհոսքի ապահովումը: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ հիշյալ գործոնների առկայությունն ինքնին չի կարող ապահովել ակնկալվող արդյունքները: Այսպես օրինակ՝ Մեծ Բրիտանիան, որտեղ կենտրոնացված են Եվրոպայի 10 խոշորագույն վերազգային կորպորացիաներից 7-ը, մեկ շնչին բաժին ընկնող եկամտի ցուցանիշով ընդամենը երկրորդ տասնյակում է<sup>10</sup>:

Հարկ է նկատել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացման շնորհիվ ընկերությունների մեծ չափերի հաշվին ձեռք բերված առավելությունները երբեմն բնորոշ կարող են լինել նաև փոքր ընկերություններին: Մասնավորապես, դա տեղի է ունենում փոքր ընկերությունների՝ մասնագիտացված ցանցերում կամ կլաստերներում<sup>11</sup> դրանց ինտեգրման շնորհիվ, փոքր ընկերություններին հասու գիտելիքի և նորարարությունների, գործառնական ծախսերի կրճատման և արտաքին խնայողությունների հաշվին<sup>12</sup>, ինչպես նաև կլաստերների միջոցով մեծ ընկերությունների առավելությունների օգտագործման շնորհիվ:

Հայաստանի պարագայում կլաստերները կարող են ձևավորվել՝ հաշվի առնելով այնպիսի կարևոր առանձնահատկություններ, ինչպիսիք են աշխարհագրական դիրքը և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման խմբավորումներին անդամակցությունը կամ դրանց հետ ակտիվ համագործակցությունը<sup>13</sup>: Ընդ որում, դրանք կարող են խթանել ներքին և արտաքին ներդրումները և ապահովել ներառական աճը երկրում, եթե կլաստերները ձևավորվեն ազգային մրցակցային առավելությունների գիտական հիմնավորման, գործնականում դրանց բացահայտման և արդյունավետ իրացման հիման վրա:

Ընդհանուր առմամբ, մրցունակությունը կարող է ձեռք բերվել արդյունաբերության կամ ծառայությունների տարբեր բնագավառներ-

<sup>10</sup> Տե՛ս Eurostat, Your key to European statistics, <https://ec.europa.eu/eurostat/web/main/home>

<sup>11</sup> Կլաստերները միջին և փոքր կազմակերպությունների կենտրոնացում են՝ հորիզոնական կամ ուղղահայաց կապերով, սեկտորի մեջ կամ սեկտորների միջև, սովորաբար որոշակի աշխարհագրական վայրում, խթանող ինստիտուցիոնալ միջավայրում, որոնք մրցում և համագործակցում են (միջ)ազգային շուկայում:

<sup>12</sup> Տե՛ս «Transaction Costs, Innovation and Learning Nooteboom, B., Tilburg University, 2006», <https://pure.uvt.nl/ws/portalfiles/portal/778088/36.pdf>

<sup>13</sup> ԵՄ, ԵԱՏՄ, Սննծվյան տնտեսական համագործակցության կազմակերպություն և այլն:

րում, իսկ կլաստերների ձևավորումը կամ «կլաստերինգը»<sup>14</sup> ավելի կիրառելի է միկրո մակարդակում, մասնավորապես, երբ ընկերությունը մշակում է զարգացման հեռանկարային ռազմավարություն: Տնտեսական ցանկացած կլաստեր կարող է ձևավորվել բազմագործոն վերլուծությունների և մոդելավորման, SWOT գործոնների բացահայտման հիման վրա, որոնք վերաբերում են ընկերությանը, դրա միկրո և մակրո միջավայրերին, երկրին և տարածաշրջանին ու համաշխարհային տնտեսության տվյալ ոլորտին:

Կլաստերինգը լայնորեն կիրառվում է Ճապոնիայում, Եվրամիության անդամ գրեթե բոլոր, ներառյալ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում և ԱՄՆ-ում: Դրանով է պայմանավորված այս երկրների մասնակցությամբ համաշխարհային տնտեսության ուժի կենտրոնների ձևավորման հանգամանքը, ինչն ավելի կազմակերպված և կանխատեսելի բնույթ է հաղորդել ինչպես ազգային տնտեսությունների, այնպես էլ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման խմբավորումների, իսկ դրանց միջոցով նաև՝ համաշխարհային տնտեսության զարգացմանը: Կլաստերինգը մեծապես պայմանավորեց նաև Չինաստանի տնտեսության հզորացումը՝ այն վերածելով համաշխարհային տնտեսության ուժի չորրորդ կենտրոնի: Այս ամենում չի կարելի թերագնահատել պետության դերը. այն կարող է կամ նպաստել կլաստերների ձևավորմանը, կամ խոչընդոտել այդ գործընթացը: Պետությունը կարող է մշակել ազատ և առողջ մրցակցության և մրցունակության կայացման համար բարենպաստ միջավայր՝ օգտագործելով իր առանցքային՝ կարգավորիչ և վերահսկիչ գործառնությունները:

Գլոբալ ֆինանսական ճգնաժամից հետո համաշխարհային տնտեսությունում տիրող համատարած անորոշությունը ստիպեց վերանայել դասական պատկերացումները մրցակցության և մրցունակության վերաբերյալ: Թեև չկա միասնական կարծիք, այնուամենայնիվ, մեր համոզմամբ, մրցունակության բարձր մակարդակ հնարավոր է ձեռք բերել ոչ միայն և ոչ այնքան մրցակցության, որքան համագործակցության միջոցով: Կարևորն այս պարագայում համագործակցային առավելությունների գիտակցումն է, որը պետք է ենթադրի նաև որոշակի շահադրաման մեխանիզմներ և համապատասխան ենթակառուցվածքների առկայություն: Վերջին շրջանում առավել հաճախակի են դարձել տեսակետներն առ այն, որ լավագույն կլաստերները, որոնք կամրջի դեր կկատարեն տնտեսության, այդ թվում՝ արդյունաբերության տարբեր ճյուղերի առաջանցիկ զարգացման համար, կարող են լինել ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու ունակ համալսարանները: Ընդամին, պետությունը կարող է ընտրովի աջակցություն ցուցաբեր-

<sup>14</sup> St' u Cluster analysis: basic concepts and algorithms, An Introduction to Clustering and different methods of clustering, S. Kaushik, November, 2016, <https://www.analyticsvidhya.com/blog/2016/11/an-introduction-to-clustering-and-different-methods-of-clustering/>

րել այն նախագծերին, որոնք լոկոմոտիվի դեր կստանձնեն ոչ միայն առանձին ճյուղերի, այլև ամբողջ տնտեսության դինամիկ և ներառական զարգացման համար:

Այսպիսով, տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից կենսական կարևորություն ունեցող տեղական արդյունաբերության զարգացման հրամայականն այլընտրանք չունի: Իսկ մրցունակ արդյունաբերություն ունենալու գրավականներից մեկը գիտականորեն հիմնավորված և համաշխարհային տրենդները հաշվի առնող արդյունաբերական քաղաքականության մշակումն ու իրականացումն է: Մյուս կարևոր գործոնը գիտության, նորարարությունների և բարձր տեխնոլոգիաների նպատակային և կազմակերպված զարգացումն է, դրա նվաճումների ինտեգրումը արդյունաբերության տարբեր ոլորտներում: Այս առումով արտերկրի ուսանելի փորձի վերլուծությունը և տեղայնացումը կարող են լրացուցիչ նպաստավոր գործոն դառնալ արտադրության գործոնների արդյունավետ օգտագործման և տնտեսության շարունակական առաջընթացի համար: Միաժամանակ, հարկավոր է մրցունակ ապրանքների և ծառայությունների համախմբից առանձնացնել այնպիսիները, որոնք կարելի է վերածել երկրի տնտեսական բրենդի՝ օգտագործելով միջազգային պրակտիկայում կիրառվող բազմաթիվ գործիքներ, ինչպես նաև ձևավորելով բարձր տեխնոլոգիական կլաստերներ, որոնք կարող են ժամանակի ընթացքում ներառել երկրի պետական հեռանկարային շահերը և մասնակցել այլ երկրների հետ համագործակցային առավելությունների բացահայտմանն ու իրացմանը:

**Բանալի բառեր** – *արդյունաբերական քաղաքականություն, տնտեսական բրենդ, կլաստեր, ներդրումներ, մրցունակություն, բարձր տեխնոլոգիաներ*

**TATUL MANASERYAN – Промышленная политика и экономический бренд страны.** – Роль местной промышленности в развитии экономики страны неопределима. Без развитой и конкурентоспособной промышленности перед государством всегда встает реальная угроза зависимости. Проблема требует глубоких и разносторонних исследований. Целесообразно выяснить ассортимент товаров и услуг, которые может предложить страна, а также разработать четкие критерии оценки и раскрытия её конкурентных преимуществ. С помощью научно обоснованных стандартов следует наметить промышленную политику страны на перспективу, учитывая при этом как внутренний рынок, так и мировые экономические тенденции.

**Ключевые слова:** *промышленная политика, экономический бренд, кластер, инвестиции, конкурентоспособность, высокие технологии*

**TATUL MANASERYAN – Industrial Policy and Economic Brand of the Country.** – The role of local industry in the development of the country's economy is invaluable. Without a developed and competitive industry, the state will always have to

face a real threat of remaining dependent on individual countries. The problem requires deep and diverse research. It is advisable to find out the range of goods and services, as well as to develop clear criteria for evaluating and disclosing competitive advantages. Consequently, with the help of scientifically based standards, the country's industrial policy should be outlined for the future, which should be improved taking into account both the domestic market and trends and world economic trends.

**Key words:** *industrial policy, economic brand, cluster, investment, competitiveness, high technology*

Ներկայացվել է՝ 17.05.2019

Գրախոսվել է՝ 04.07.2019

Ընդունվել է տպագրության՝ 22.07.2019